ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի նիստի

ք. Երևան *19 մայիսի, 2023թ. ժամը՝ 12:00*

Նախագահում էր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (այսուհետ՝ ՀԱՄԿ) նախագահ Էլեն Մանասերյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ և Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ՝

Տիրուհի Նազարեթյան	ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ
Արմեն Ավետիսյան	ԲՈՒՀ-երի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառողական կոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ռուբեն Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի մշտական փոխարինող)
Լենա Նանուշյան	ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արաքսիա Սվաջյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Մարգարիտա Զալիբեկյան	ՀՀ արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ (Հանձնաժողովի անդամ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանի մշտական փոխարինող)
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Վահագն Համբարձումյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի ՀԿ նախագահ
Արթուր Հովհաննիսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործընկեր-

	փաստաբան (Հանձնաժողովի անդամ, Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործընկեր-փաստաբան Ժաննա Սիմոնյանի մշտական փոխարինող)
Գոհար Մկոյան	«Սոցիալական ձեռներեցների դպրոց»-ի հիմնադիր տնօրեն (Հանձնաժողովի անդամ, «Հրայր Մարուխեան» հիմնադրամի ծրագրերի համակարգող Թադևոս Ավետիսյանի մշտական փոխարինող)

Հրավիրվածներ և նիստին մասնակցող անձինք

Բորիս Խարատյան	ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ (ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանի մշտական փոխարինող)
Արիստակես Դանիելյան	Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հանձնաժողովի անդամ, ԲՈՒՀ-երի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Արմեն Ավետիսյանի մշտական փոխարինող)
Ժանետա Թորոսյան	Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահի խորհրդական (Հանձնաժողովի անդամ, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանի մշտական փոխարինող)
Լաուրա Հակոբյան	Բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հանձնաժողովի անդամ, Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Անահիտ Ասատրյանի մշտական փոխարինող)
Կարինե Ալոյան	«Էլեկտրաարհմիություն» արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շուշան Պետրոսյան	Առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Էսմա Սիմոնյան	Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Սեյրան Ավագյան	«Միաբանություն» արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Լիլիթ Կարապետյան	Տրանսպորտի և հաղորդակցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Արմենուհի Պողոսյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ (Հանձնաժողովի անդամ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Մվաջյանի մշտական փոխարինող)
Սուրեն Չիբուխչյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, «ԱՐՄԵՆԳԱԿ» տարա, փաթեթավորման և պոլիգրաֆիական արտադրանք արտադրողների և սպառողների իրավաբանական անձանց միության նախագահ (Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանի մշտական փոխարինող)
Նունե Հովհաննիսյան	ԱՄԿ Ազգային համակարգող
Սամվել Խարազյան	ՀՀ առողջապահության նախարարի խորհրդական հասարակական հիմունքներով
Ժորա Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության բաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ
Իգաբել Աբգարյան	Փորձագետ
Նաիրա Օհանյան	«Հայաստանի հաշվապահների» ՀԿ, խորհրդատու
Հարություն Պետրոսյան	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն»-ի գծային ուղեմասի պետ
Անետ Բարիկյան	ՀԱՄԿ-ի աշխատակազմի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի իրավաբան
Արսեն Իգիթյան	Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության արտաքին կապերի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար

Լաուրա Դեմիրչյան	ՀԱՄԿ-ի աշխատակազմի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Նարեկ Մկրտչյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Արմենուհի Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Միհր Մարկոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն
Ժաննա Սիմոնյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ,«Կոնցեռն Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործընկեր-փաստաբան
Թադևոս Ավետիսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության գործընկեր, «Հրայր Մարուխեան» հիմնադրամի ծրագրերի համակարգող

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ այս նիստը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի համակարգմամբ առաջին Հանրապետական եռակողմ հանձնաժողովի նիստն է:

Այնուհետև, Է. Մանասերյանն ավելացրեց, որ Հայաստանի Հանրապետությունը դեռևս 1992թ. լինելով Աշխատանքի միջազգային կազմակերպության անդամ պետություն, ունի մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ եռակողմ խորհրդակցություններ անցկացնելու: Սա նշանակում է, որ ցանկացած իրավական ակտ կամ նախագիծ, որն իր մեջ պարունակում է աշխատանքային և սոցիալ-տնտեսական իրավունքներին վերաբերող դրույթներ, պետք է քննարկվի Հանրապետական եռակողմ հանձնաժողովում և եթե ոչ Հանձնաժողովում, ապա սոցիալական գործընկերների հետ: Մինչդեռ, «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը նախօրոք չի քննարկվել սոցիալական գործընկերների հետ: Այն պարզաբանումը, որ այս նախագիծը քննարկվել է հասարակական կազմակերպությունների կամ որոշակի գործատուների հետ բոլորովին չի ծածկում սոցիալական գործընկերությունը, քանի որ որևէ հասարակական կազմակերպություն չի կարող ներկայացնել շահառուների այն բանակը, որոնց որ պիտի վերաբերի այս նախագիծը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը շնորհակալություն հայտնեց հանդիպումը և քննարկումը կազմակերպելու համար: Ռ. Սարգսյանը կարևորեց սոցիալական գործընկերությունն առողջության համապարփակ ապահովագրության հարցի քննարկման համար և ավելացրեց, որ այսօրվա սոցիալական գործընկերների հետ քննարկման նպատակը նախագծի վերաբերյալ դիտարկումներ և առաջարկություններ ունենալն է:

Էլեն Մանասերյանն առաջարկեց քվերակության դնել օրակարգի նախագիծը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ՝14, դեմ՝0, ձեռնպահ՝0

Հանձնաժողովը հաստատեց օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1. Հանրապետական եռակողմ հանձնաժողովի քարտուղարի մասին

2. «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և հարակից այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի քննարկում

3. ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին առաջարկի քննարկում

4. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին առաջարկի քննարկում

5. ԱՄԿ թիվ 29, թիվ 105 Կոնվենցիաների և ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի անհամապատասխանությունը վերացնելու մասին առաջարկի քննարկում

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1384-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին առաջարկի քննարկում

7. Այլ հարցեր

1. Հանրապետական եռակողմ հանձնաժողովի քարտուղարի մասին

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց Է. Մանասերյանը և առաջարկեց Հանրապետական եռակողմ հանձնաժողովի քարտուղար ընտրել ՀԱՄԿ-ի աշխատակազմի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի պետ Լաուրա Դեմիրչյանին:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ՝14, դեմ՝0, ձեռնպահ՝0

Հանձնաժողովի որոշմամբ Հանրապետական եռակողմ հանձնաժողովի քարտուղար ընտրվեց ՀԱՄԿ-ի աշխատակազմի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի պետ Լաուրա Դեմիրչյանը:

2. «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և հարակից այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի քննարկում

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեցին ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը և փորձագետ Իզաբել Արզարյանը:

Լ. Նանուշյանը նախ անդրադարձավ Է. Մանասերյանի կողմից նշված «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի Նախագիծը սոցիալական գործընկերների հետ չքննարկելու հարցին և նշեց, որ իրենց համար նշանակություն չունի թե որ գործընկերների հետ սկզբից կքննարկվի նախագիծը: Կարևորը և սկզբունքայինն այն է, որ Նախագիծը քննարկվի մասնակից բոլոր գործընկերների հետ, քանի որ առողջության համապարփակ ապահովագրությունը վերաբերվում է ոչ միայն աշխատողներին, այլ նաև բնակչության բոլոր խմբերին: Առողջությունն այնպիսի մի ոլորտ է, որ որևէ մեկին իր ծննդյան օրից մինչև մահ անմասն չի մնում, շփվում է համակարգի հետ և կյանքի տարբեր փուլերում կարիք է ունենում օգտվել բժշկական ծառայություններից: Լ. Նանուշյանը նաև շեշտեց, որ

հենց իրենք են դիմել Նախագիծը Հանրապետական եռակողմ հանձնաժողովում քննարկելու համար, քանի որ այս փուլում է հիմնականում պատրաստ հիմնական սկզբունքներով մշակված օրենքի նախագիծը:

Այնուհետև Լ. Նանուշյանը խոսեց «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախապատմությունից, որից հետո, և փորձագետ Իզաբել Աբգարյանը ներկայացրեց օրենքի նախագիծը:

Մասնակիցների կողմից ծավալվեց քննարկում, որի ընթացքում բարձրացվեցին հետևյալ հարցերը:

Շմավոն Մկրտչյան՝ Առևտրի, հասարակական սննդի, սպառողական կոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո կսահմանվի նոր հարկատեսակ, որի ամբողջ բեռը կկրեն պետությունը և աշխատողը: Նախագծով սահմանված 164400 դրամը, որը ամսական կկազմի մոտավորապես 14000 դրամ, աշխատողի համար բավականին ծանր բեռ կլինի:

Նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ առողջապահության համակարգին ուղղված պետական բյուջեից ծախսը նախատեսված է մոտավորապես 5.4%: Բարեփոխումից հետո պետության վրա բեռը քանի՞ տոկոս կկազմի:

Նախագծի Հիմնավորման երկրորդ էջում նշված է, որ ՀՀ-ում առողջապահության պետական ֆինանսական միջոցների պակասը և կատարվող ծախսերի անկառավարելիությունը խոչընդոտում են առողջապահական համակարգի զարգացմանը:

Ինչպե՞ս կարող է հսկայական կառավարչական ապարատ ունեցող պետությունում ինչ-որ ծախսեր լինել անկառավարելի, երբ կա պետական վերահսկողական ծառայություն, տեսչական մարմին, կան այլ վերահսկողական մարմիններ:

Առողջապահության նախարարի հասարակական հիմունքներով խորհրդական Սամվել Խարազյանը նոր հարկատեսակի հարցի վերաբերյալ պատասխանեց, որ ապահովագրական վճարը այդքան էլ հարկատեսակ չէ, այլ վճար է և ՀՀ հարկային օրենսգիրքը սահմանում է՝ հարկերը և վճարները: Ապահովագրական վճար, որպես պետական վճար հավաքագրվելու է պետական բյուջեում և ուղղորդվելու է հիմնադրամ՝ բոլոր քաղաքացիների համար անհրաժեշտ առողջապահական ծառայությունների դիմաց հատուցումները ապահովելու համար:

Մյուս հարցի վերաբերյալ Ս. Խարազյանը նշեց, որ շատ կարևոր է ապահովագրական վճարների հավաքագրման արդարության սահմանումը, որպեսզի ըստ եկամուտների բեռը հավասարաչափ բաշխվի և շեշտեց, որ ցանկացած վճար լրացուցիչ բեռ է աշխատողների համար, մինչդեռ, առողջապահական ծախսերն այսպես թե այնպես ծախսվում են: Ապահովագրության նպատակն այն է, որ ծախսերը կատարվեն ճիշտ սկզբունքով, հավասարաչափ և հնարավորինս արդար: Արդարության սկզբունքը կարելի է ապահովել՝ դիտարկելով եկամուտների չափը: Ս. Խարազյանն ավելացրեց, որ նշված հարցի լուծումներն առաջարկվում է Նախագծի 14-րդ հոդվածով:

Պետական բյուջեից առողջահահությանն ուղղված ծախսերի վերաբերյալ Ս. Խարազյանը պատասխանեց, որ ռեֆորմից հետո այն կկազմի մոտավորապես 15%:

Անկառավարելի ծախսերի վերաբերյալ Լ. Նանուշյանը պատասխանեց, որ անկառավարելի ծախսն այն է, որ բացի պետական պատվերից, մնացած բնակչության ծախսերը չեն կառավարվում:

Գագիկ Մակարյան՝ Գործատուների հանրապետական միության նախագահ

Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ մոտ 22 միլիարդ է և մինչև 2027թ. կշարունակի աճել, պետական բյուջեն մոտ 5 միլիարդի է և կշարունակի աճել, հետևաբար, այս համատեքստում գումարներ

են առաջանում: Երկու տարի առաջ սկսված նախաձեռնությունը կարող է արդեն հնացած լինել՝ ֆինանսական լուծումների առումներով:

Արդյո՞ք տնտեսական աճի հետևանքով առաջացած լրացուցիչ գումարները կուղղորդվեն դեղերի արտադրության խթանմանը Հայաստանում:

Գ. Մակարյանն առաջարկեց հրաժարվել նվազագույն աշխատավարձի հարկերից և դրանք ուղղորդել առողջապահական ծախսերի սուբսիդավորմանը և կարևորելով կանխարգելիչ միջոցառումներն՝ առաջարկեց սուբսիդավորվել դիագնոստիկ կենտրոնները:

Կա՞ն արդյոք ֆինանսական հաշվարկներ, թե գումարային ի՞նչ է պետք և ի՞նչ է լուծվելու և դինամիկայի մեջ այդ հաշվարկը:

Լ. Նանուշյանը պատասխանեց, որ ՀՆԱ-ի աճի հետ կապված առաջարկվում է մինչև 2027թ. պիլոտային ծրագիր ներդնել և աշխատողներին կամավոր թույլ տալ միանալ այդ ծրագրին: 2027թ. պետությունը կվերագնահատի իր հնարավորությունները և պիլոտային ծրագրի արդյունքները ցույց կտան, թե որ ճանապարհով պետք է գնանք:

Դեղերի հետ կապված Լ. Նանուշյանը պատասխանեց, որ այսօր լծակներ չկան, որպեսզի կարգավորվեն դեղեր ներկրողների կամ վաճառողների շահույթը: Համակարգը ներդնելուց հետո պետությունը բավականին մեծ մասնաբաժին է վերցնելու իր վրա, այդ թվում՝ դեղերի փաթեթ է առաջարկվելու և դրանով կարգավորվելու է:

Գ. Մակարյանը նշեց, որ ինքը նկատի ուներ դեղերի արտադրությունը և ավելացրեց, որ տարիներ շարունակ ՀՀ կառավարության ծրագրերում գերակայություն է դեղագործությունը: Այդո՞ք դեղագործության վրա ազդելու է, ուղղորդվելու է դրա զարգացմանը: Քաղաքացիները պետք է վստահ լինեն, որ իրենց հարկերն ուղղվում են երկարաժամկետ ռազմավարությունների զարգացմանը և ավելացրեց, որ այդ մասը պետք է ներառվի նախագծում:

Լ. Նանուշյանը պատասխանեց, որ հաշվի կառնվի և ավելացրեց, որ, եթե պետությունն առաջարկում է և դեղատունը վաճառում է դեղը, պետությունը ֆինանսավորում է դեղի արժեքը, ապա դա կխթանի դեղագործության արտադրությանը:

Դիագնոստիկ սուբսիդավորման մասով կանխարգելիչ միջոցառումները մեծ տեղ են գրավելու այս ռեֆորմի մեջ և բոլոր տարիքային խմբերի համար փաթեթներ են մշակվել, թե ինչ սկրինինգներ տարեկան կամ երկու տարին մեկ պետք է անցնի քաղաքացին, որը մեծ նշանակություն ունի իրավիճակը փոխելու համար:

Ֆինանսական հաշվարկի վերաբերյալ Լ. Նանուշյանը պատասխանեց, որ տարիներ շարունակ, բացառությամբ բովիդի տարիներին, վերլուծություններ են արվել, թե ինչ հիվանդացություն ենք ունեցել և այդ հիվանդացության հիման վրա մշակվել է այն ծառայությունների փաթեթը, որը փակելու է դրանց մոտ 90 տոկոսը: Այստեղ հաշվի է առնվել, թե ինչքան կանխարգելելի է, ինչքան է աղքատացնում բնակիչներին: Նույնիսկ այս պահին այդ փաթեթն ամբողջությամբ չի ներկայացնում իրավիճակը, քանի որ այդ փաթեթը ներկայացնում է արդեն բարդացած դեպքերը:

Գ. Մակարյանն առաջարկեց աշխատավարձի ինչ-որ մի շեմ սահմանել և հարկերի մասով սուբսիդավորել:

Լ. Նանուշյանը պատասխանեց, որ առաջարկը կարող է քննարկվել ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Անի Իսպիրյանը կարևորեց դեղերի արտադրության վերաբերյալ հարցը և նշեց, որ ապահովագրությունն ինքնին որպես ֆինանսական ինստրումենտ, բովանդակությունը մի փոքր այլ է: Այն ապահովում է մարդու առողջությունը, որի դիմաց բուժօգնության ծառայությունն է: Շնորհակալություն հայտնեց հարցի համար և ավելացրեց , որ կմտածեն արդյոք այս բարեփոխումների շրջանակում դա հնարավոր է անել, թե ոչ:

Արմեն Ավետիսյան՝ ԲՈՒՀ-երի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Եթե աշխատողն ունի հիպոտեկային վարկ եկամտային հարկի վերադարձով և չի բավարարում տոկոսադրույքների հետ կապված, ապա այս դեպքում առողջության համապարփակ ապահովագրության հետ կապված եկամտային հարկն ի՞նչպես է վերադարձվելու:

Ա. Ավետիսյանը նշեց, որ կան սոցիալապես պատասխանատու գործատուներ, որոնք և արհմիության առաջարկով և իրենց նախաձեռնությամբ՝ իրենց հաշվին, տարիներ շարունակ իրենց աշխատողներին ապահովագրել են: Այդ ապահովագրություններն ունեն բավականաչափ լուրջ փաթեթներ: ԵՊՀ-ի փաթեթի արժեքը մեկ աշխատողի հաշվարկով կազմում է 98000 դրամ, բայց կա այնպիսի առողջության ապահովագրություն, որն այս օրենքով այդ նույն փաթեթը չենք կարողանալու ունենալ : Այդ պարագայում ինչպե՞ս է կարգավորվելու:

Ա. Ավետիսյանն առաջարկեց Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդում ընդգրկել աշխատողների ներկայացուցիչներին:

Սոց. փաթեթի հետ կապված Լ. Նանուշյանը պատասխանեց, որ ծանոթ է նշված փաթեթին և ավելացրեց, որ այս փաթեթն ավելի լավն է լինելու:

Սոցիալապես պատասխանատու գործատուների հարցի վերաբերյալ Լ. Նանուշյանը պատասխանեց, որ օրենքով հնարավորություն է տրվում գործատուների կողմից կամավոր վճարումներ կատարել:

Եկամտային հարկի հետ վերադարձի հետ կապված հարցի վերաբերյալ Լ. Նանուշյանը պատասխանեց, որ պիլոտային ծրագիր է լինելու, որի ավարտից հետո, եթե պետությունն ավելի շատ հնարավորություն ունենա, ապա կաջակցի: Հիպոտեկային վարկով եկամտային հարկի վերադարձով բնակարան ձեռք բերելու համար պետության կողմից արդեն աջակցություն տրամադրվում է:

Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդում աշխատողների ներկայացուցիչներին ընդգրկելու հարցի վերաբերյալ Լ. Նանուշյանն առաջարկեց ներկայացնել առաջարկությունը, որից հետո այն կքննարկվի:

Էլեն Մանասերյան՝ ՀԱՄԿ-ի նախագահ.

Նախագծով առաջարկվող 164 400 դրամը վերջնական չէ և հաշվի է առնվելու գնաճը: Մինչդեռ, ՀՀ-ում աշխատանքային օրեսգիրքն ընդունվել է 2004 թվականին և գործում է 2005 թվականից, որով սահմանված է աշխատավարձի ինդեքսավորման մասին հոդված, բայց աշխատավարձի ինդեքսավորում չի կատարվում: Այսինքն, տարիներ շարունակ աշխատավարձի չափը կարող է չբարձրանալ, բայց առողջապահության դեպքում գինը կբարձրանա՝ գների թանկացման պատճառով: Ինչպե՞ս կարելի է լուծել նշված խնդիրը: Արդյո՞ք ընդունվելու է աշխատավարձի ինդեքսավորման կարգ:

Լ. Նանուշյանը պատասխանեց, որ ապահովագրական վճարի փոփոխության մասին օրենքում ֆիքսելու նպատակը այն է, որ յուրաքանչյուր փոփոխություն արվի օրենքի մակարդակով, բազմակողմ քննարկումների արդյունքում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանը պատասխանեց, որ նախատեսվում է նվազագույն աշխատավարձի չափի բարձրացում, բայց ոչ այս տարի, քանի, որ նվազագույն աշխատավարձի և զամբյուղի տրամաբանական կապը հաշվարկների մեջ պահպանվում է:

Արթուր Հովհաննիսյան՝ Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործընկեր-փաստաբան

Եթե աշխատողն ունի չաշխատող կին և երկու երեխա, ապա գործատուն, որպես հարկային, գործակալ աշխատողի աշխատավարձից պետք է փոխանցի քառապատի՞կը:

Կարո՞ղ է արդյոք անձը պարտադիր ապահովագրության շրջանակում օգտվել իր նախընտրած բժշկական հաստատությունից, եթե տվյալ բժշկական հաստատությունը չունի պայմանագիր Հիմնադրամի հետ:

Եթե անձը տվյալ տարում չի օգտվել ապահովագրությունից, ապա հաջորդ տարի կուտակվելո՞ւ է անձի կողմից տարեկան ապահովագրության համար վճարված գումարները, եթե անձը բացի պարտադիր տարեկան զննությունից, այլ բժշկական ծառայությունից չի օգտվել:

Առաջին հարցի վերաբերյալ Լ. Նանուշյանը պատասխանեց, որ երեխաների, կենսաթոշակառու ծնողների համար անվճար է, աշխատողը վճարում է իր համար: Գործատուն կարող է կամավոր վճարել աշխատողի ընտանիքի անդամի համար և ավելացրեց, որ չապահովագրված անձանց համար նախատեսվելու է առողջապահական մինիմալ ծառայություններ:

Երկրորդ հարցի վերաբերյալ Լ. Նանուշյանը պատասխանեց, որ որպեսզի պետությունը որոշի, թե որ բժշկական հաստատություններն են ծառայություններ տրամադրելու, մի շարք պահանջներ է ներկայացնելու, որից մեկը լիցենզավորման պահանջն է: Եվ ի լրումն ներկա պահանջներին, մշակվում են լրացուցիչ պահանջներ, որոնց բավարարման դեպքում պայմանագիր կկնքվի միայն այդ բժշկական հաստատությունների հետ:

Գումարների կուտակման վերաբերյալ Սամվել Խարազյանը պատասխանեց, որ կուտակվելու է:

Տիրուհի Նազարեթյան՝ ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ

Ո՞ր երկրներն են ուսումնասիրվել և ո՞ր երկրների առողջության ապահովագրության մոդելներն են վերցվել:

Լ. Նանուշյանը պատասխանեց, որ բազմաթիվ երկրների մոդելներ են ուսումասիրվել, համադրվել է ներկա իրավիճակի, խնդիրների հետ և առաջարկվել է մի մոդել, որը տարբեր երկրների մոդելներից ունի որոշակի մասեր:

Անահիտ Ասատրյան՝ Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Սոցիալական փաթեթ ունեցող պետական աշխատողների ապահովագրությունը վճարում է պետությունը, օրենքի ընդունումից հետո բժշկական ծառայություններն ընդլայնվելու են, արդյո՞ք պետությունը շարունակելու է վճարել, թե աշխատողները պետք է ներդրումներ կատարեն:

Համատեղությամբ աշխատանքի դեպքում յուրաքանչյուր աշխատավայրից պետք է վճարումնե՞ր կատարվեն:

Աշխատողը համարվելո՞ւ է ապահովագրված անձ, եթե գտնվում է իր հաշվին երկարատև արձակուրդում:

Լ. Նանուշյանը նշեց, որ եթե օրենքի նախագծում կան բացեր, ապա առաջարկեց տալ կոնկրետ առաջարկություններ:

Պետաշխատողների հարցով Լ. Նանուշյանը պատասխանեց, որ օրենքը հաստատելուց հետո մշակվելու են բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և բոլոր հարցերն ավելի մանրամասն այնտեղ կներառվեն:

Էլեն Մանասերյանն առաջարկեց նիստն ընդմիջել և շարունակել 2023թ. մայիսի 26-ի ժամը 11:00:

Առաջարկությունն ընդունվեց:

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի նիստի շարունակություն

ք. Երևան *26 մայիսի, 2023թ. ժամը՝ 11:00*

Նախագահում էր ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ և Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ՝

Տիրուհի Նազարեթյան	ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ
Արմեն Ավետիսյան	ԲՈՒՀ-երի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառողական կոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ռուբեն Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի մշտական փոխարինող)
Մարգարիտա Զալիբեկյան	ՀՀ արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ (Հարձնաժողովի անդամ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանի մշտական փոխարինող)
Արմենուհի Պողոսյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ (Հանձնաժողովի անդամ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի մշտական փոխարինող)
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների Հանրապետական միության նախագահ
Վահագն Համբարձումյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի ՀԿ նախագահ
Արթուր Հովհաննիսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործընկեր-փաստաբան (Հանձնաժողովի անդամ, Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» սահմանափակ

	պատասխանատվությամբ ընկերության գործընկեր-փաստաբան Ժաննա Սիմոնյանի մշտական փոխարինող)
Գոհար Մկոյան	«Սոցիալական ձեռներեցների դպրոց»-ի հիմնադիր տնօրեն (Հանձնաժողովի անդամ , «Հրայր Մարուխեան» հիմնադրամի ծրագրերի համակարգող Թադևոս Ավետիսյանի մշտական փոխարինող)

Հրավիրվածներ և նիստին մասնակցող անձինք

Բորիս Խարատյան	ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանի մշտական փոխարինող)
Արիստակես Դանիելյան	Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հանձնաժողովի անդամ, ԲՈՒՀ-երի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Արմեն Ավետիսյանի մշտական փոխարինող)
Ժանետա Թորոսյան	Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահի խորհրդական (Հանձնաժողովի անդամ, ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանի մշտական փոխարինող)
Լաուրա Հակոբյան	Բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հանձնաժողովի անդամ, Պետհիմնակրների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Անահիտ Ասատրյանի մշտական փոխարինող)
Սեյրան Ավագյան	«Միաբանություն» արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ժորա Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Դավիթ Հովսեփյան	ՀՀ առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ
Նաիրա Օհանյան	«Հայաստանի հաշվապահների »ՀԿ, խորհրդատու
Աննա Բարիկյան	ՀԱՄԿ-ի աշխատակազմի աշխատանքային և սոցիալական իրավունքների բաժնի իրավաբան
Արսեն Իգիթյան	Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության արտաքին կապերի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Լաուրա Դեմիրչյան	ՀԱՄԿ-ի աշխատակազմի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Բացակայում էին՝
Հանձնաժողովի անդամներ

Նարեկ Մկրտչյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Արմենուհի Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Լենա Նանուշյան	ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արաքսիա Սվաջյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Միհր Մարկոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն
Ժաննա Սիմոնյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ,«Կոնցեռն Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործընկեր-փաստաբան
Թադևոս Ավետիսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության գործընկեր, «Հրայր Մարուխեան» հիմնադրամի ծրագրերի համակարգող

Հանձնաժողովի անդամների կողմից շարունակվեց «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումը:

Ելույթ ունեցավ Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Անահիտ Ասատրյանը. «Մինչև նախագծին անցնելն ուզում եմ անդրադառնալ նախորդ օրվա քննարկմանը:

Նախ պարզ երևաց, որ ոչ բոլորն են տեղյակ սոցիալական գործընկերության այս հարթակից, այդ պատճառով որոշեցի անդրադառնալ դրան:

Հանձնաժողովը ստեղծված է Եռակողմ հանրապետական Կոլեկտիվ պայմանագրով՝ երկրում ժողովրդավարությունն ապահովելու նպատակով: Ինչ է դա նշանակում. պայմանագրում ամրագրված է, որ ցանկացած նախագիծ, որը այսպես կամ այնպես վերաբերում է աշխատողներին, նրանց ընտանիքների անդամներին, իսկ դա նշանակում է երկրում գրեթե բոլորին, պետք է քննարկվի սոցիալական գործընկերների հետ մինչև հանրայնացնելը:

Քննարկումը չի ենթադրում գալ ներկայացնել, գնալ: Քննարկելը նշանակում է, նաև բանակցել, խորհրդակցությունների փուլեր անցկացնել և գալ համաձայնության: Համենայն դեպս, այդպես է նախատեսված ՀՀ կողմից վավերացրած կոնվենցիաներով: Այնինչ տիկին Նանուշյանն նշեց, որ

տարբերություն չի դնում ում հետ քննարկել և երբ, և ինչպես, այդպիսով առհամարելով սոցիալական գործընկերության ինստիտուտը:

Տիկին Նանուշյանը նաև փորձում էր մեզ այստեղ համոզել, որ առողջության ապահովագրության հայեցակարգը բերվել է հանձնաժողով և քննարկվել է, ինչը մեղմ ասած չի համապատասխանում իրականությանը:

Ճիշտ է մեր Հանձնաժողովը բավարար նիստեր չի ունեցել, բայց տիկին Նանուշյանը ընդամենը 2 անգամ է մասնակցել նիստերին և երկու անգամն էլ փորձել է մեզ ինչ որ չարած բանում մեղադրել. այսպես անցած շաբաթվա նիստին, երբ նա մեր հարցերին պատասխանելու փոխարեն, ակնարկեց, որ մենք պետք է աջակցենք կառավարությանը հակածխախոտային օրենք ընդունելու մեջ: Այո, գուցե և այդպես է, բայց այդ օրենքը ևս չի բերվել այս հարթակ քննարկելու, ինչպես չի բերվել տարբեր այլ նախագծեր:

Սա հետևություններ անելու համար եմ ասում, քանի որ պարոն Սարգսյանը նախորդ օրն ասեց, որ ինստիտուտ ենք փորձում աշխատացնել, երևի պետք է այլ բան մտածել, ինստիտուտը աշխատացնելու մասին: Ես անձամբ նման պահվածքը այս հանձնաժողովի նկատմամբ ընկալում եմ, որպես անարգանք Վարչապետի ստորագրության նկատմամբ: Ինչքանով էր զեղեցիկ, երբ տիկին Նանուշյանը, իրեն մեզանից առանձնացրեց, ասելով «Ձեր հանձնաժողովը»:

Այս ամենին անդրադառնում եմ, որովհետև նիստից հետո առողջապահության նախարարությունն իրենց ՖԲ էջում գրել է, որ տեղի է ունեցել քննարկում, ասոցիացիաների, արհմիությունների ներկայացուցիչների և տասնյակ գործատուների հետ, այսինք իրենք այդպես էլ չհասկացան, որ սա վարչապետի ստորագրությամբ նաև ստեղծված հանձնաժողովի նիստ է:

Անդրադառնալով նախագծին, նշեմ, որ նիստի նախորդ օրը հնչեցին հարցեր, որի պատասխանները մենք չստացանք, օրինակ գործընկերներից մեկը հարցրեց, եթե աշխատողն արդեն ունի վարկ, որի տոկոսը մարվում է եկամտային հարկից, ինչպես է լինելու այդ աշխատողին ապահովագրության վճարի մասի վերադարձը: Հիշում եք, պատասխանի փոխարեն, ասվեց, պետությունը արդեն ձեզ լավություն է արել:

Ես հարց տվեցի, ինչպես է լինելու պետական աշխատողների առողջության ապահովագրությունը, պետությունը շարունակելու է վճարել, թե ոչ, պատասխանը չեղավ, ասվեց, որ հետո կընդունվեն ենթաօրենսդրական ակտեր, նոր պարզ կլինի:

Ես էլի շատ խնդիրներ եմ տեսնում այս օրենքում, օրինակ, բացակայում է ծառայությունների ցանկը, որոնցից կարող է օգտվել աշխատողը:

Սոցիալական արդար համակարգ չի ներդրվում այս օրենքով, ամբողջ բեռը դրվում է պետության և աշխատողի վրա: Եկամտային հարկի վերադարձը 40 կամ 20 տոկոսի չափով մեծ դեր չի խաղում, աշխատողը վճարի 15000, վերադարձվի 3000:

Բնակարան գնած աշխատողների ամբողջ եկամտային հարկը վերադարձվում է, որովհետև այդտեղ բիզնեսի շահ կա, իսկ երբ այս նախագծով ընդամենը 15000- ի մասին է խոսք գնում, դա ինչու՞ չի վերադարձվում, այն դեպքում, երբ աշխատողը վճարում է 50-100 հազար և ավելի եկամտային հարկ:

Մեկ այլ խնդիր, Նախագծով վճարները աշխատողներից են պահում, իսկ Հոգաբարձուների խորհրդում արհմիությունների մասնակցություն չեք նախատեսել, փոխարենը գործատուների կազմակերպություններ եք նախատեսել:

Օրենքն ավելի շատ կոնցեպտի է նման և կա մտավախություն, եթե այն հիմա ընդունվի, հետագայում բազմաթիվ ենթաօրենսդրական ակտերով, բոլորովին այլ խնդիրների առջև կհայտնվեն աշխատողները:

Այսօր ունենք մի այլ խնդիր, մենք տարբերություն ենք դրել հանրային ծառայողների միջև և ասում ենք, որ համայնքային ծառայողները չեն կարող ունենալ առողջապահական փաթեթ, որովհետև իրենք վարձատրվում են համայնքի կողմից: Կներեք, եթե աշխատողը աշխատում է, համայնքի համար, նշանակում է պետության համար, նա մեղավո՞ր է, որ այլ տեղից է գալիս ֆինանսավորումը, աշխատողի վրա դա չպետք է ազդի, մանկապարտեզում աշխատող մանկավարժը մեղավո՞ր է, որ այս պետության

օրենքն այնպիսին է, որ մանկապարտեզը ՀՈԱԿ է, իսկ դպրոցը՝ ՊՈԱԿ, կամ վարչապետի աշխատակազմի սպասարկում ՊՈԱԿ-ի աշխատակիցները մեղավո՞ր են, որ իրենք չեն համարվում աշխատակազմի աշխատակիցներ, այլ աշխատակազմի ՊՈԱԿ են, և դրա համար չունեն սոցփաթեթ։

Այսպիսի էլեմենտար հարցեր լուծված չեն, ու մինչև չիմանանք, թե ինչպես են սրանք լուծվելու ես չեմ կարող կողմ լինել այս նախագծին»։

Ռ. Սարգսյանն առաջարկեց օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարություն և ես մեկ անգամ նախագիծը քննարկել գործընկերների հետ։

Է. Մանասերյանը Ռ. Սարգսյանի առաջարկությամբ քվեարկության դրեց «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ առողջապահության նախարարություն հետ ուղարկելու՝ լրամշակելու և հետագայում քննարկելու նպատակով հարցը։

Քվեարկության արդյունքներ՝ կողմ՝11, դեմ՝0, ձեռնպահ՝1

Հանձնաժողովը որոշեց. «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը հետ ուղարկել ՀՀ առողջապահության նախարարություն՝ լրամշակելու և հետագայում նորից քննարկելու նպատակով։

Գ. Մակարյանը շեշտեց, որ «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը արմատապես վերանայման կարիք ունի՝ հաշվի առնելով ՀՀ բյուջեի ներկայիս հնարավորությունները և տնտեսական աճի տեմպերը։

Գ.Մակարյանը նշեց նաև, որ իրենք որպես հարկատուներ, արհմիությունները աշխատողների մասով հարկատուներ հարկերը վճարում են և լրացուցիչ վճարների մասին խոսել չեն ցանկանում։ Հաշվարկներ անցյալ անգամ էլ չներկայացվեցին, բացարձակապես կույր հաշվարկով է գնում՝ տարվա կտրվածքով որքա՞ն միլիոն դոլար է կազմում, ի՞նչ չ կանխատեսումներ կան, այդ գումարը ի՞նչ թիվ է կազմում, ինչո՞ւ է բեռը դրվում աշխատողների վրա կամ ստիպում գործատուներին ինչ-որ բաներ անել, և ի՞նչ թիվ է դա, որը պետությունը չի կարող այդ բեռը վերցնել իր վրա և ավելացրեց, որ պետք է լինեն ապացույցներ կոնկրետ հաշվարկներով։ Ցանկացած գլոբալ ռեֆորմի դեպքում պետության կողմից պետք է հետազոտություն իրականացվի։

Ա. Հովհաննիսյանը խնդրեց ՀՀ արդարադատության նախարարության գործընկերներին ուշադրություն դարձնել Նախագիծը Սահմանադրականության տեսանկյունից, քանի որ պարզ չէ,թե քաղաքացիների կողմից վճարված 164000 դրամներն չօգտագործվելու դեպքում ինչ-որ ձևով կուտակվելո՞ւ է, թե՞ ոչ։ Չկուտակվելու դեպքում Սահմանադրության հետ խնդիր է առաջանալու սեփականության իրավունքի օրինական ակնկալիքի մասով։ Ա. Հովհաննիսյանն ավելացրեց նաև, որ այս համակարգը այնպես է գրված Նախագծում, որ Սահմանադրական այս իրավունքը չի իրացվելու։ Անձը չի կարողանալու իր ցանկացած բժշկական հաստատություններից օգտվել, քանի որ բժշկական հաստատությունների վրա ինչ-որ լրացուցիչ պարտականություններ են դրվելու, որոնց դեպքում հաստատությունները չեն կարողանալու պայմանագիր կնքել ՊՈԱԿ-ի հետ և արդյունքում դուրս են մնալու ցանկից։ Այս լրացուցիչ պարտականությունները պետք է գրվեն լիցենզավորման փուլում։ Ա. Հովհաննիսյանը նշեց նաև, որ ուսումնասիրել է Առողջության համապարփակ ապահովագրության հետ կապված ՀՀ հարկային օրենսգրքում նախատեսվող փոփոխությունները, որոնց համաձայն՝ եկամտային հարկի վերադարձ կատարվելու է միայն մեկ դեպքում՝ եթե հիպոտեկային վարկի համար եկամտային հարկի վերադարձ արդեն կատարվում է։

«Միաբանություն» արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Մեյրան Ավագյանը նշեց, որ Նախագծում առկա են կոպիտ սխալներ։ Նախագծի 34-րդ հոդվածի 4-րդ մասով Հիմնադրամին տրվել է շահույթ բաշխելու իրավունք, սակայն հիմնադրամն իրավունք չունի շահույթ բաշխել։ Հիմնադրամները շահույթ չեն ստեղծում։

3. ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին առաջարկի քննարկում

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ԲՈՒՀ-երի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Արմեն Ավետիսյանը:

Օրակարգի 3-րդ հարցով առաջարկվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «Եթե հանգստյան օրը և ոչ աշխատանքային տոնական կամ հիշատակի օրը համընկնում է, ապա հանգստյան օրը տեղափոխվում է տոնական կամ հիշատակի ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օր»:

Ռ. Սարգսյանը նշեց, որ հարցը կքննարկվի պետական հատվածի գործընկերների հետ:

Է. Մանասերյանը քվեարկության դրեց հետևյալ հարցը. ՀՀ աշխատանքի և սոցիալականի հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին առաջարկի վերաբերյալ մշակվի նախագիծ և հետագայում շրջանառվի:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ՝ 10, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0

Հանձնաժողովը որոշեց. ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին առաջարկի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվի նախագիծ և հետագայում շրջանառվի:

4. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին առաջարկի քննարկում

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ԲՈՒՀ-երի արհեստակցական կազմակրեպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Արմեն Ավետիսյանը:

Օրակարգի 4-րդ հարցով առաջարկվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունում «պրոռեկտորները (ռազմաուսումնական հաստատության պետի տեղակալները)» բառերից հետո լրացնել «բարձրագույն ուսումնական հաստատության արհեստակցական կազմակերպության նախագահը» բառերով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արմենուհի Պողոսյանը առաջարկեց առաջարկությունը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Է. Մանասերյանը քվեարկության դրեց հետևյալ հարցը. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին առաջարկը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից քննարկվի, առաջարկի վերաբերյալ մշակվի նախագիծ և հետագայում շրջանառվի:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ՝ 11 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Հանձնաժողովը որոշեց. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին առաջարկը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից քննարկվի, առաջարկի վերաբերյալ մշակվի նախագիծ և հետագայում շրջանառվի:

5. ԱՄԿ թիվ 29, թիվ 105 Կոնվենցիաների և ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի անհամապատասխանությունը վերացնելու մասին առաջարկի քննարկում

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը: Առաջարկը ներկայացվել է ՀԱՄԿ-ի անդամ Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից:

Օրակարգի 5-րդ հարցով առաջարկվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ կերպ՝ «Գործատուն անհրաժեշտության դեպքում կարող է աշխատողին ներգրավել արտաժամյա աշխատանքներում, եթե առկա է աշխատողի գրավոր համաձայնությունը այդ մասին՝ բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերի» :

Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ՃՀՄ-ի նախագահի խորհրդական Ժ.Թորոսյանը լրացրեց Տ.Նազարեթյանի զեկուցումը, նշելով, որ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-մասով սահմանված է, որ գործատուն ընդունում է ներքին իրավական ակտեր աշխատողներին արտաժամյա աշխատանքի և հերթապահության ներգրավելու դեպքում : Նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ «Գործատուի ընդունած ներքին և անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում այդ ակտի մասին համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու պահից, եթե այդ իրավական ակտով այլ ժամկետ նախատեսված չէ»:

Ժ. Թորոսյանը նշեց նաև, որ այս կարգավորումներից հետևում է, որ 145-րդ հոդվածի բոլոր՝ 1-ի 1-6 կետերում նշված դեպքերում գործատուն պարտավոր է իրազեկել /տեղեկացնել/ աշխատողներին արտաժամյա աշխատանքներին ներգավելու մասին: Մինչդեռ 145-րդ հոդվածի 2-րդ մասով բացառվում է աշխատողներին իրազեկելը /տեղեկացնելը/, եթե նրանք ներգրավված են հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված աշխատանքներում: Ելնելով բերված փաստից՝ առաջարկում ենք ՃՀՄ-ի ներկայացրած նախագիծը լրացնել՝ նշելով նաև, որ ՀՀ ԱՕ 145-րդ հոդվածի 2-րդ մասը չի համապատասխանում ՀՀ ԱՕ 5-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի պահանջներին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանը նշեց, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ԱՄԿ թիվ 29, թիվ 105 Կոնվենցիաների և ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների և ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի միջև անհամապատասխանություն չի տեսնում և ավելացրեց, որ այս հարցի մասով ԱՄԿ փորձագետների կողմից որևէ անգամ դիտողություն չի արվել:

Ժ. Թորոսյանը նշեց, որ Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության առաջարկը հիմնավորված է ԱՄԿ թիվ 29, թիվ 105 և ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, և նպատակ ունի վերացնելու Հայաստանի Հանրապետությունում հարկադիր կամ պարտադիր աշխատանքի կիրառումը՝ առանց աշխատողի կամավոր համաձայնության:

Ռ. Սարգսյանն առաջարկեց քվեարկության դնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի փոփոխության անհրաժեշտությունը որոշելու համար:

Է. Մանասերյանը քվեարկության դրեց Ռ. Սարգսյանի առաջարկը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ՝ 5, դեմ՝ 6, ձեռնպահ՝ 0

Հանձնաժողովը որոշեց. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի փոփոխության անհրաժեշտություն չկա:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1384-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին առաջարկի քննարկում

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը: Առաջարկը ներկայացվել է ՀԱՄԿ-ի անդամ Բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության և Տրանսպորտի և հաղորդակցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից:

Օրակարգի 6-րդ հարցով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1384-Ն որոշման Հավելված 1-ի 23-րդ կետը լրացնել «ֆինանսավարկային համակարգի աշխատողներ» բառերով, իսկ 31-րդ կետը լրացնել «մետրոպոլիտենի թունելային հատվածում թունելային գծային ուղեմասի գծի աշխատողներ» բառերով:

Ռ. Սարգսյանը նշեց, որ ֆինանսավարկային համակարգի աշխատողների մասով Նախագիծն արդեն պատրաստ է: Մետրոպոլիտենի աշխատակիցների հարցը քննարկվել է աշխատակիցների հետ և այն կներառվի մեկ փաթեթում:

Ա. Ասատրյանը նշեց, որ անհրաժեշտ է Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահներին նույնպես ներառել ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկում, քանի որ նրանց աշխատանքն էլ է վնասակար:

Ռ. Սարգսյանն առաջարկեց Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահների կամ որևէ թիրախային խմբի հետ կապված առաջարկությունները ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ քննարկելու համար:

Է. Մանասերյանը նշեց, որ մասնագիտությունների անվանումները և պրակտիկայում առկա մասնագիտությունների անվանումները չեն համընկնում, հետևաբար հետագայում արտոնյալ պայմաններով կենսաթոշակի գնալու դեպքում դասիչները չեն համապատասխանում:

Ռ. Սարգսյանը նշեց, որ մինչև այս տարվա վերջ նախատեսվում է ունենալ առնվազն նախագծային մակարդակի դասակարգիչներ, որոնք կլինեն ISO 07 ստանդարտով՝ ընդունելով թե եվրոպական, թե ամերիկյան ստանդարտների մոդելները:

Ռ. Սարգսյանը նշեց, որ Է. Մանասերյանի դիտարկումը հաշվի կառնվի:

Է. Մանասերյանը քվեարկության դրեց հետևյալ հարցը. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1384-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին առաջարկի վերաբերյալ մշակվի նախագիծ և հետագայում շրջանառվի:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1384-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին առաջարկի վերաբերյալ ՀՀ

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվի նախագիծ և հետագայում շրջանառվի:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԿ-ի ՆԱԽԱԳԱՀ Է. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Լ. ԴԵՄԻՐՉՅԱՆ